Արձանագրություն N 3

«ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ձևով գնման ընթացակարգի հանձնաժողով նիստի

ք. Երևան 28 հուլիսի 2020 թ. ժ. 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սողոմոնյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ժ. Մարգարյան, Ա. Տոնոյան
Բացակայում էին՝ Դ. Բայրամյան, Ա. Եփրիկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Մանուչարյան

Հուլիսի 27-ին՝ ժամը 12:00-ին, ք. Երևանում՝ Արշակունյաց 7 հասցեում կայացած միաժամանակյա բանակցությունների ընթացքում արձանագրվել էր, որ երկրորդ տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ), ներկայացրել էր 43 000 000 (քառասուներեք միլիոն) ՀՀ դրամի գնային առաջարկ՝ առանց ԱԱՀ-ի, սակայն էլեկտրոնային ստորագրությամբ Կադաստրի կոմիտե ներկայացվել էր 43 000 000 ՀՀ դրամի գնային առաջարկ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Հիմք ընդունելով Հիմնադրամի 2020 թվականի հուլիսի 29-ի թիվ 01-13-01/29-01 գրությունը՝ շտկում է կատարվել Հիմնադրամի ներկայացրած գնային առաջարկում:

1. Բանակցությունից հետո առաջին և հաջորդաբար տեղեր են զբաղեցրել հետևյալ մասնակիցները՝ (արժեքները ներկայացված են առանց ԱԱՀ-ի):

1. «Արխի Լաբ» ՍՊԸ-ն 8 900 000 ՀՀ դրամի գնային առաջարկով
2. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը 43 000 000 ՀՀ դրամի գնային առաջարկով
3. «Արաքսոիելթի» ՍՊԸ-ն 44 000 000 ՀՀ դրամի գնային առաջարկով
4. «Մոդուլ» ՍՊԸ-ն 57 000 000 ՀՀ դրամի գնային առաջարկով
5. «ՍՊ Գեոնավիթել» ՍՊԸ-ն 66 225 000 ՀՀ դրամի գնային առաջարկով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գին առաջարկած մասնակցին նախապատվություն տալու սկզբունք:

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանվում է 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3 դեմ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Ա. Սողոմոնյան

Անդամներ՝ _____ Ժ. Մարգարյան

_____ Ա. Տոնոյան

Հանձնաժողովի

քարտուղար՝ _____ Լ. Մանուչարյան